

*Le più grandi cose nascono dal
sangue!*

*Il sangue dei martiri è l'aurea
della nazione futura.*

Venizia, 6 luglio 1916

Gabriele d'Annunzio

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԷՆ

ՄԵԾԱՄԵԾ ԳՈՐԾԵՐԸ ԱՐԻՒՆԷՆ ԿԸ ԾՆԻՆ:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՐԻՒՆԸ ԱՐՇԱԼՈՅՍՆ Է ԱՊԱԳԱՅ ՑԵՂԻՆ:

ՎԵՆԵՏԻԿ, 6 Յուլիս 1916

ԿԱՊՐԻԷԼԷ ՏՄԱՆՈՒՆՑԻՈՅ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺ-Ի ՁՈՀԵՐՈՒՆ

ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԱՍԵՂԾՐ ԻՍՐԱՅԷԼ ՏԽՐՈՒՆԻ

Ապրիլեան Նահատակներու շարքին, մեր մտաւորական հոյլը՝ փայլուն աստղ մ'ալ կորանցուցած է աքսորի ճամբաներուն վըրայ. անձանթ ու մոռցուած բանաստեղծ մը, որ սիրած է կեանքը՝ խանդավառ երազներով, հիւսած է իր զարունները վարդերու, յաւիկներու փթթումով, ու կեանքի կարօտը սրտին մէջ՝ յանկարծ օր մը կը լսէր ոստիկանի մը խապոտ ձայնը, որ զինքն ալ կը կանչէր իրեն հետեւելու: Պէտք էր ցմիշտ լքել կեանքը, վտարուի, երկասարկ զարունները:

Զինքն ալ պիտի խառնէին մտաւորականներու խումբին. ծանօթ անուն էր ԻՍՐԱՅԷԼ ՏԽՐՈՒՆԻ. քերթուածներ, յօդուածներ զբաւած էր զանազան թերթերու մէջ, կուսակցական դործիչ եղած էր սահմանադրութեան օրերուն...:

Կը խորհիմ թէ մեր ներկայ դրագէտներէն շատ քիչեր լսած պիտի ըլլան իր անունը, մոռցուած բանաստեղծ մը զարակներու մէջ մնացած, գեղնորակ թերթերու մէջ, եւ աւա՛ղ, արիւնոտ յիշամեակ մը պիտի դար զինքն ալ կանչէր. — Ելի՛ր յարութեան լոյսով, տրամութեան երգիչ:

Իր իրական անունով ԱՐԻՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ծնած է 1885ին, Կիւմիւլէզանէ գիւղականին մէջ: Հայրենակից է Վենետիկի միաբան Հ. Մանուէլ Զախլախեանին, որուն անունը կապուած է Հայերէնէ-Իտալիէն ընտիր բառգիրքի մը:

Արիս ունեւոր ընտանիքի զաւակ էր. իր պապերը շինած են նաեւ ծննդավայրին Ս. Աստուածածին եկեղեցին:

Իր նախնական ուսումներն անշուշտ ըստացած է Կիւմիւլէզանէի Մեսրոպեան վարժարանին մէջ. իր վրայ ամէնէն շատ

ազդեցութիւն դործած են վայրի բնութիւնը, ծաղկաւէտ ձորերը, մանաւանդ հիւթեղ պտուղները:

Քաղիլ խնոր, դեղձ, բուլ ու նուռ ոսկեհատ:

Հակառակ որ Կիւմիւլէզանէն, երբեմնի Արծաթիկը, կռթնած ժայռի մը՝ չոր եւ բարբարոս գիւղ մը ունէր, բայց իր ոտքերուն կը փռուէին կանաչ դաշտեր, այգիներ եւ պարտէզներ, ուր պատանի Արիսը կ'անցընէր ուրախ կեանք մը: Հերիսը կ'անցընէր ուրախ կեանք մը: Հերիսը՝ հին վանք մը կար, այգիներուն մէջ, ուր ուխտի կու դային Կարինէն, Բարբերէն ու Տրապիզոնէն. շարաթներ կը մնաւին Ամենափրկիչ վանքի պարտէզներուն մէջ: Թէպէտ Տրապիզոնի նահանգին մէջ էր գիւղականը, բայց ճամբաներու վրայ. իր պտուղները մինչեւ Ռուսաստան կ'արտածէր, իր արծաթի հանքերն աղքատօրէն շահագործելու համար:

Անշուշտ իր գիւղին ծխական դպրոցը պիտի չգոհացնէր ծնողքին փափաքը՝ իրենց զաւակին բարձր կրթութիւն եւ ուսում տալու համար: Մօտ էր Տրապիզոնը, հազիւ 25-30 մղոն հեռու, ուր կը գտնուէր Վենետիկի Հայրերու Միութեան վարժարանը. 1896ին Արիս Իսրայէլեան կը մտնէր այդ դպրոցի սեմէն ներս:

Հոն երեք տարի մնաց՝ միջնակարգ դպրոցն աւարտելու համար. իր դասընկերներէն մէկ հոգի ողջ է, Պ. Մկրտիչ Շահնապարեան (Փլովտիւ), որուն չնորհակալութեամբ կը պարտինք այս համառօտ ծանօթութիւնները: Երկու անբաժան ընկերները, 1899ին, Տրապիզոնի վարժարանին տեսուչ Հ. Յակոբ Տիրոյեանի կարգադրութեամբ՝ կ'անցնին Վենետիկ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանը: Հոն չու-